

2018 թ. մարտի 26-ին Հայաստանի ազգային գրադարանի և Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի միջև (Բուդապեշտ) կնքվեց համագործակցության հուշագիր, որի շրջանակում Հայաստանի ազգային գրադարանը կաջակցի համալսարանի գրադարանը՝ հայագիտական ուղղվածության գրականությամբ համալրելու գործում:

Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանը կարևորեց Եվրոպայում հայագիտական հետազոտություններով զբաղվող նման կենտրոնի առկայությունը, և շեշտեց ամբինոի վարիչ Բալին Կովաչի կարևոր դերակատարումը ամբինոի կայացման գործում:

Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Սուրոմի Սաբոլչն իր երախտագիտությունը հայտնեց Ազգային գրադարանի կողմից ցուցաբերվող աջակցության համար: